ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

9 նոյեմբեր, 2020 թվականի № 43-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի № 50-Լ որոշմամբ հաստատված կարգի 2.16 կետով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթի կազմակերպման և անցկացման Ժամանակավոր հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի նոյեմբերի 6-ի «Մրցույթում հաղթող ճանաչելու մասին» № 2 որոշումը (այսուհետ՝ Որոշում) և Հանձնաժողովի կողմից Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահին 2020 թվականի նոյեմբերի 6-ին ներկայացված գրավոր հիմնավորումը և հաշվի առնելով Որոշմամբ մրցույթում հաղթող ճանաչված անձի գործնական հմտությունների, որակավորումների և աշխատանքային փորձառության համապատասխանությունը «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի պաշտոնին և Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 36-Լ որոշմամբ սահմանված պահանջներին՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հովհաննես Մովսիսյանին 2020 թվականի նոյեմբերի 11-ից նշանակել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն 5 տարի ժամկետով:
2. Լիազորել Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահին՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության անունից Հովհաննես Մովսիսյանի հետ կնքել համապատասխան աշխատանքային պայմանագիր:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

9 նոյեմբեր, 2020 թվականի
ք. Երևան